

QURIA ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՎԱԿՆԵՐԸ

Արճեշի շրջանի Հաղի գյուղի մոտ Ուրարտուի Արգիշտի II թագավորի (մ.թ.ա. 714-685թթ.) թողած արձանագրության մեջ հիշատակվող ^{KUR}Quria երկիրը¹ գտնվում էր Վանա լճից հյուսիս-արևելք,² «Աշխարհացոյց»-ի Աղիովիտ գավառի տարածքում՝ Գնունի նախարարական տոհմի տիրույթում:³ Այս սեպագրային երկրանունը իմաստաբանական ուղղակի կապի մեջ է *Գնունի* տոհմանվան, Գնունի հազարապետների արքունի մատովակներ լինելու իրողության,⁴ ինչպես նաև նրանց տիրույթի՝ հետագա Արճեշ գավառի, մինչև Մեծ եղեռն ունեցած համբավի հետ՝ որպես ընտիր խաղող և ընտիր գինի ունեցող շրջանի:⁵

Գնունի տոհմանունն առաջին ստուգաբանողը եղել է Մովսես Խորենացին: Նա գրում է. «Գիտեմ եւ զԳնունիսոյ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն, որ սքանչելի իմն դիպեալ եղեւ ըստ գործոյն եւ անունն քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր եւ ի համեղ գինեաց՝ ունէր եւ կոչումն անուանն Գին»:⁶ Խորենացու առաջարկած *Գին/Գնունի/գինի* ստուգաբանական շարքը կարելի է համարել նույնարմատ և իմաստաբանական նույն շարքին պատկանող հետևյալ բառերով. *օրինակ* «Խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղևով, մեծ՝ կլոր հատիկներով, որից կախան են պատրաստում»,⁷ *գինեծաղիկ* «խաղողի ծաղիկը, որից հետո երևում է ազոխը»,⁸ *գինուկ* «գինու խաղող, բարակ կեղևով, սպիտակ մանր հատիկներով»,⁹ ինչպես նաև՝ «*գինն* գինին է»:¹⁰ Սրանց բոլորի հիմք **գին*-ը ծագում է հ.-ե. **uei-/*ui* «ոլոր(վ)ել, փաթաթ(վ)ել, գալար(վ)ել» արմատից, որից են ծագում նաև փաթաթվող-գալարվող բույսերի և ոլորվող-հյուսվող շիվեր ունեցող ծառերի, մասնավորապես, խաղողի վազի և ուռենու անունները հնդեվրոպական մի շարք

¹ *Меликишвили Г., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, надп. N 276; Арутюнян Н., Топонимика Урарту (այսուհետև՝ ТУ), Ер., 1985, стр. 123.*

² *ТУ, стр. 41, 123.*

³ *Արոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 338:*

⁴ *Պետրոսյան Ս., Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես» (ՊԲՀ), 1999, թիվ 2-3, էջ 175-178:*

⁵ *Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան հ.1, Եր., 1986, էջ 462:*

⁶ «Մովսիսի Խորենացու պատմութիւն Հայոց», Եր., 1981, գիրք Բ, գլուխ Ը:

⁷ *Մայխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Եր., 1944, էջ 435:*

⁸ *Նույն տեղում, էջ 436:*

⁹ *Նույն տեղում, էջ 437:*

¹⁰ «Բառագիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները, *Հ. Ամալյանի*, Եր., 1975, էջ 66, ծան. 183:

լեզուներում. հմմտ *v i i i* դ. *ἄμπελον* (Hesych.) «խաղողի վազ», լատին *vitis* և հին պլավ. *vinjaga*՝ նույն նշանակությամբ:¹¹

Ուրարտուի Սարդուրի II թագավորը (մ.թ.ա. 764-735թթ.) Եթիունիի դեմ ձեռնարկած արշավանքի դրվագներից մեկում ասում է. «Գնացի Եթիունե (երկրի) վրա, երբ դարձա (եղա) Եթիունե երկրի կողմում (?), ամբողջ (?) Երիախե (երկիրը) անջատեցի (?) բուն (?) Կուրիանե (երկրից): Արշավեցի Բյանե (երկրի) վրա»:¹² Թեպետև դժվար է բերված հատվածի ամբողջական ընկալումը, այդուհանդերձ պարզվում է, որ Կուրիանե/Quria(ni) երկիրը հարևանն է եղել կենտրոնական Շիրակում գտնված Էրիախի¹³ երկրի: Քանի որ Սարդուրի II-ը Բյանի/Բզանի (հյուսիսային Վանանդում) երկիր մտել էր Էրիախիից, ոչ թե Կուրիա(նի)ից, ուրեմն վերջինս չէր կարող գտնվել ո՛չ Էրիախիի և Բզանիի միջև,¹⁴ ո՛չ էլ «Չալդրը լճի կամ Շիրակի մոտակայքում»,¹⁵ այլ միայն Շիրակի (Էրիախիով) մոտակայքում:

Ի.Դյակոնովի կարծիքով, Սարդուրի II-ի կողմից հիշատակված ^{KUR}Quriani երկիրը կարող էր լինել ավելի ուշ ասորեստանյան արձանագրություններից մեկում ^{KUR}Gurania կոչված երկիրը, որը գտնվում էր «Ուրարտուի և Գամիրայի միջև»:¹⁶ Բայց այս հիշատակությունից պարզ երևում է, որ Գուրանիան եղել է հետագա Վիրքի (Իրերիա) հովտային մասն զբաղեցրած կիմերների Գամրիա երկրի հարևանը, այսինքն՝ գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսում: Այս երկուսից տարբեր է Ռուսա I արքայի (մ.թ.ա. 735-713թթ.) Ծովինարի արձանագրության մեջ հիշատակված ^{KUR}Guria(ini) երկիրը, որը գտնվում էր «այն կողմից ծովային գավառում՝ լեռնա(շրթայի) ստորոտի» 19 երկրների շարքում,¹⁷ որովհետև սրանք բոլորը տեղորոշվում են Սևանա լճից՝ «ծովից» հարավ և արևելք ընկած շրջաններում:¹⁸ Վերջին երկու երկրանունների տարբերությունը Quria-ից արտացոլված է նրանց Guria- գրության մեջ, *g*-ի դիմաց *g*: Ս. Հմայակյանը Quria(ni)-ն տեղորոշում է Էրիախիից հարավ,¹⁹ որոշակի ճշտումով՝ հարավ-արևելք, «Աշխարհացոյց»-ի Արագածոտն գավառի հյուսիսում՝ Էրիախիի և Ուազա/²Aza երկրի (Արարատյան դաշտի Արաքսամերձ ձախափնյակում) միջև:

¹¹ *Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ)*, т. II, Тб. 1984, стр. 650, *Աճառյան Հ.*, *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. I, Եր., 1971, էջ 554:

¹² «*Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*» (այսուհետև՝ ՀԺՊԲ), հ. I, Եր., 1981, էջ 79 (թարգմ. Հ. Կարապոզյանի):

¹³ *ТУ*, стр. 258-259.

¹⁴ *ТУ*, стр. 67.

¹⁵ *ՀԺՊԲ*, հ. I, էջ 82, ծան. 20:

¹⁶ *УКН*, надп. N 155 F; *Дьяконов И., Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետև՝ АВИИУ)* «Вестник древней истории», 1951, NN 2, 3, 4, надп. N 50, пр. 2; *Նույնի, Предыстория армянского народа, Ер., 1968, стр. 169.*

¹⁷ *УКН*, надп. N 266, *ՀԺՊԲ*, հ. I, էջ 85:

¹⁸ *ՀԺՊԲ*, հ. I, էջ 85, ծան. 2:

¹⁹ *Հմայակյան Ս., Շիրակը Լուշա-Կատարգա-Վիտերուխի դաշնության կազմում, «ՇՊՄԺ հանրապետական առաջին գիտաժողովի թեզիսներ», Գյումրի, 1994, էջ 22:*

Կուռիա(նի) երկրի այսպիսի տեղադրության մասին խոսում է նաև նրա Quria(ni) անունը՝ բաղկացած *կուռ «խաղող», «գինի» արմատից²⁰, -ia և ուրարտական սեպագրության լեզվից հավելված -ni վերջածանցներից: Այս վերջածանցներից առաջինը, ի տարբերություն երկրորդի, պատկանում է բուն տեղանվանը, ծագում է հ.-ե. *-(i) iā նախածնից՝ հայերենում գործուն վաղնջահայերենի փուլում (մ.թ.ա. III հազ.- մ.թ.ա. XIIIդ.) և վերածված -ի վերջածանցի:²¹ Այն՝ որպես տեղանվանակերտ վերջածանց²² (հմմտ. *Այլի, Լոռի, Կարբի, Կորի, Կուսայրի, Ուշի և այլն*), իր արտացոլումն է գտել նաև սեպագրային և հետին գուգահեռ ձևերում (հմմտ. *Արծանիա/Արածանի, Արլիա/Այլի, Արկանիա/Արկնի, Ալիա/Հաղի, Գիարնիա/Գաունի*):²³ *Կուռ արմատը ծագում է հ.-ե. *ger «դարձնել», «գալարել», «ուրել» արմատի *gōr- միջին ձայնդարձից, որից ունենք մի կողմից *կուել, կունակ* և այլն,²⁴ մյուս կողմից՝ խաղողին և գինեգործությանը վերաբերող հետևյալ բառերը:

Կուել (<*կուռի-ակ, իսկ *կուռի <*կուռ-ի -ի վերջածանցով՝²⁵ ծագած հ.-ե. *-(i) iā վերջածանցից) «վարի խաղողի մի տեսակ, որից ներկ են պատրաստում գինին ներկելու համար»:²⁶ *Կուռ* «խաղողի որթի գլխավոր ճյուղերը, որոնց վրա գտնվում են մի քանի շիվեր»:²⁷ *Կուսկաս սալ* (կուսկաս<կուռ-ա-կաս) «խաղողի որթի նոր արձակած ճյուղերը ձողի վրա կապել, որպեսզի դեպի վեր բարձրանան»:²⁸ *Կուռի* (<կուռ-ի) ծածկաբար՝ «գինի»:²⁹ *Կուռել* (<կուռ-ճ կամ *կուռ-իճ, -ճ կամ -իճ վերջածանցների համար հմմտ. մի դեպքում *լիճ, կորճ, հարճ, մորճ, մուրճ* «մուր», մյուս դեպքում՝ *թնիճ, կաիճ, ուտիճ, պատիճ և այլն*) «կարասի տակի գինին կամ ամանի մեջ եղած մի հեղուկ ուրիշ ամանով քաշել ցամաքեցնել»:³⁰ Նույն *կուռ «խաղող, գինի», արմատն է, ամենայն հավանականությամբ առկա նաև Կապուտան (Ուրմիա) լճի արևմտյան ափի հին հայկական Կուռիճան գավառի անվան մեջ:³¹ *Կուռիճան* <*կուռ-իճ-ան՝ բաղկացած *կուռ արմատից, հիշյալ -իճ վերջածանցից և -ան տեղանվանակերտից (հմմտ. *Ալեան, Դերջան, Երեան, Թորդան* և այլն): Կուռիճան գավառն իր տեղադրությամբ համընկնում է սեպագիր Gilzan գինեվետ երկրին³² կամ նրա մի մասին:

²⁰ Հմմտ. *Պետրոսյան Ս.*, Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, էջ 176-177:

²¹ *Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 231:

²² *Петросян С.* Племенный союз Хайаса–Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 3, էջ 81, 84-85:

²³ *Կարազեռզեան Յ.*, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Եր., 1998, էջ 84, 132, 206:

²⁴ *Աղայան Է.*, բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 102-103, 107-108:

²⁵ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 627:

²⁶ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 494:

²⁷ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 638:

²⁸ ՀԲԲ, հ. II, էջ 490:

²⁹ Նույն տեղում, էջ 494:

³⁰ ՀԲԲ, հ. II, էջ 491:

³¹ *Երեմյան Ս.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 35, 108:

³² Հմմտ. *Дьяконов И.*, *АВВВУ*, надп. N 23, 27, 28 և *ТУ стр.* 64.

Աղիովտի և Արագածոտնի Quria երկրանունների ստուգաբանական-իմաստաբանական նույնությունը հաստատելու է գալիս հետևյալ իրողությունը: Հայոց արքունի մատովակի գործակալությունն զբաղեցրած Գնունի նախարարական տոհմը տիրությունը ուներ ոչ միայն Աղիովիտ և Առբերանի գավառներում, որտեղ էր գտնվում Quria-ն, այլև Արագածոտնում, որտեղ գտնվում էր Quria(ni)-ն: Գնունի տոհմի՝ Արագածոտնում տիրությո՞ւն եննալու առթիվ Ն. Ադոնցը գրում է. «Մաստաբա գյուղի հինավուրց եկեղեցում պահպանվել է մի արձանագրություն, որի մեջ ասված է, թե եկեղեցին կառուցվել է Գնունյաց Թեոդորոս եպիսկոպոսի օրոք: Այս հանգամանքը պարզաբանում է Ներսեսի Վարքում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի՝ Գնունիները հիշվում են Շիրակի նախարարությունների թվում, և անկասկած, ապացուցում է Գնունի տոհմի առնչությունը Արագածի ստորոտի բնակավայրերին»:³³ Ն. Ադոնցը, ըստ այսմ, կարծում է, թե այստեղ է գտնվել Գնունիների բնօրրանը, այսուհանդերձ շեշտում է, որ այստեղ նրանք բնակվել կարող էին միայն որպես պալատական մատովակներ:³⁴

Հարցում հստակեցում մտցնում է Ամատունիների օրինակը: Հագարապետի պաշտոնում Գնունիներին փոխարինելով՝ նրանք ստացել էին Արագածոտնում գտնվող Օշականն իր շրջակայքով՝ խաղողաշատ ու զինեվետ մի տարածք: Արշակունյաց անկումից հետո միայն կարող էր «ձեռական իշխանության» իրավունքով Ամատունիներին հանձնված Օշականն ու շրջակայքը դառնալ նրանց սեփականությունը՝ արդեն ժառանգական իրավունքով:

Հայկական լեռնաշխարհի խաղողագործության և զինեգործության օջախներից մեկը՝ Արագածոտնը լինելու վկաներից են Մեծամորի բրոնզիդարյան սրբարանում ծիսական հաց թխելու օջախի և սաջի կողքին գտնված երկարավիզ սափորները, որոնք «վկայում են զինու հեղման արարողություններ»:³⁵ Նույնպիսին է եղել Արագածոտնի դերը նաև ուրարտական դարաշրջանում, երբ նրա հարավային մասը կրում էր Quria-ին իմաստակից Uaza/°Aza անունը՝ նույնական հայերեն *վազ* «խաղողի որթ» բառի հետ:³⁶ Վերջինս ծագում է *վազել* «դուրս ցատկել» բայի *վազ* արմատից, որի նախածնը հ.-ե. *ueg'h- «շարժվել, ընթանալ» արմատն է:³⁷ Uaza երկրի՝ ուրարտական դարաշրջանում զինեգործության խոշոր կենտրոն լինելու մասին են խոսում Կարմիր բլուր հնավայրի (Թեյշեբաինի քաղաք) պեղումներից հայտնաբերված 9 մառանների գետնաթաղ կարասները, որոնց ընդհանուր տարողունակությունը հասնում է կես միլիոն լիտրի:³⁸

Հաջորդ հազարամյակներում ևս Արագածոտնի երկու մասերը պահել էին խաղողագործության և զինեգործության նշանավոր կենտրոններ լինելու իրենց

³³ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 338:

³⁴ Նույնը:

³⁵ Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Եր., 1973, էջ 123:

³⁶ УКН, N127 IV; Арутюнян Н., Новые Урартские надписи Кармир-Блур, Ер., 1966, стр. 91, пр. 43.

³⁷ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 293, Джаукян Г., Очерки по истории и дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр. 264-265.

³⁸ Мартirosյան А., Город Тейшебаини, по раскопкам 1947-1958 гг., Ер., 1961, стр. 96.

համբավը: Թրք. աղավաղում-վերիմաստավորումով հայտնի *Դավալու* գյուղանունը իր հիմքում ունի արաբերեն *davālī* «մի տեսակ խաղող» բառը³⁹ և ոչ թե թրք. լեզուների *davalu/develu* «ուղտատեղ» բառը (Արարատյան դաշտի բնակչությունը երբևէ ուղտաբուծությամբ չի զբաղվել): Ըստ երևույթին, *Դավալի* անունով են արաբները կոչել իրենց քաջ հայտնի Դվինի շրջակայքը, իսկ հետո այն վերագրվել է նույն շրջանի Դավալու/Արարատ գյուղին, ապա և՛ ներկայիս Արարատ քաղաքին:⁴⁰ Արագածոտնի այս կամ այն մասին օտարներից տրված մի անուն է հիշատակում XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին: Շահ-Աբասի գործերի ավերած և բնակիչներին բռնագաղթի ենթարկած Արևելյան Հայաստանի գավառների թվում Լոռի-Համզախիմանի (հյուսիս-արևելքում), Կարսի (արևմուտքում) և Կաղզվանի (հարավ-արևմուտքում) միջև նա հիշատակում է «զՇարապխանէն, զՇիրակուան, զԶարիշատ»:⁴¹ Թվարկված գավառներից առաջինը համապատասխանում է Արագածոտնի հյուսիսային մասին, երկրորդը՝ Շիրակին, երրորդը՝ հյուսիսային Վանանդին: *Շարապխանէ* անունը հյուսիսային Արագածոտնն ստացել էր պարսիկներից այն պարզ պատճառով, որ նա ըմբռնվել է ողջ Արևելյան Հայաստանի մասանը, գինետունը: Պարսկերեն *շարապխանէ* բառը հենց «մառան, գինետուն» է նշանակում:

Արագածոտնի հյուսիսում էր գտնվում առ այսօր կանգուն Փարսի գյուղը, որի անունը մեր «խաղողային» բնույթի տեղանուններից է: Նրա հիմքում *փար*-արմատով և *պ*- աճականով կազմված *փարպ բառն է (հմմտ. *ամպրոպ* բառի կազմությունը),⁴² որին հավելվել է վերոհիշյալ *-ի* տեղանվանակերտ վերջածանցը: *Փարպ* բառի *փար*- արմատը նույնն է *փարել* «պարփակել, բովանդակել» և *փարիլ* «փաթաթվել, գրկախառնվել» բայերի արմատի հետ, բայց իմաստով ավելի մոտ է վերջինիս: *Փարել* և *փարիլ* բայերը ծագում են հ.-ե. **sper-* «ոլորել, փաթաթել» արմատից, որից են նաև հուն. *σπεῖρα* «գալար կամ ոլորկ (օձի ցանցի)», «պարան», *σπάρος* «մի տեսակ բույս, որ հյուսելով պարան են գործում», *σπάργω* «բարորել» և այլն:⁴³

Հ.-ե. **sper-* արմատի հունարենում ունեցած նշանակություններից առաջինն ու երկրորդը բնորոշ են նաև հայերենին, որում ունենք *պարան* բառը ոչ միայն «պարան, չվան», այլև «շուռ գալը, շուռ տալը, շրջվելը» նշանակություններով (հմմտ. *պարան գալ, պարանիլ* «պտույտ գալ, դառնալ»),⁴⁴ իսկ *-ոց* վերջածանցի հավելումով ունենք *պարանոց* «վիզ, ճիտ»:

Հնդեվրոպական այս արմատի «ոլորել, փաթաթել» իմաստը հատկացվել է նաև խաղող վազի որևէ առարկայի (ծառ, ձող, ցից) փաթաթվելով աճել-բարձրանալուն, ուստի *պարան* բառը բարբառներում նշանակում է նաև «այգիների

³⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 416:

⁴⁰ Ասլանյան Ա., Գրգեարյան Հ., Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 29:

⁴¹ Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցույ, Վաղարշապատ, 1896, էջ 53:

⁴² ՀԱԲ, հ. I, էջ 163:

⁴³ ՀԱԲ, հ. IV, էջ 487-488:

⁴⁴ ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 77, ՀԱԲ, հ. IV, էջ 56:

(իմա՝ խաղողի այգիների) մի տեսակ չափ», «որթատունկերի մեկ ուղղությամբ տնկված շարքը»:⁴⁵ Ի նկատի առնելով *պար-/փար-* համարժեքությունը՝⁴⁶ *Փարսյի* տեղանվան հիմք *փարպ «վայրի խաղող» բառի հնչյունական տարբերակը կարող ենք տեսնել *պարսպուտ* (<*պարպուտ) «վայրի որթ, վագ»⁴⁷ բառի մեջ (-*ուտ* վերջածանցի համար հմմտ. *դանդուտ, ճապուտ, մամուտ, ջաջուտ* բուսանունները): Պարպուտ հիմքին -*ինէ* վերջածանցի հավելումով կա բարբառային *պարսպուտինէ* «վայրի որթ, որ բուսնում է Ջեյթունի լեռներում» բառը:⁴⁸

Բերված «խաղողա-գինիական» ստուգաբանությամբ տեղանուններին իմաստով հարող տեղանուններ կային նաև Վանա լճի շրջակայքում: Դրանցից մեկը Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի հիշատակած ^{URU}Zanziuna բնակավայրի⁴⁹ անունն է: Նրա հիմքում առկա են հայերեն *չանչ* բառը (սեպագրությամբ սա կարող էր արտացոլվել միայն zanz- տեսքով) և -*ին* վերջածանցը (հմմտ. *կորին, հերին, ջանջին, տրոփին և* այլն): *Չանչ* նշանակում է «խաղողի ողկույզը, որի վրայից հատիկները պոկած են. քնթեռն», «քամած խաղողի մնացորդը» (չանչից օղի են քաշում, չանչը գինուն կծվություն և թթվություն է տալիս) և համարվում է իրական կամ կովկասյան փոխառություն:⁵⁰ Մեր կարծիքով, հակառակ ուղղությամբ՝ հայերենից այդ լեզուներ կատարված փոխառությունն ավելի հավանական է, որովհետև *չանչ* բառի և իր *չաչ* տարբերակի հայերեն գրական լեզվում և բարբառներում ունեցած բազմազան նշանակությունները⁵¹ բացառում են այդ հնարավորությունը: Բանն այն է, որ *չանչ* բառը խաղողին վերագրվել է նրա հատիկներից զրկված տունկը ձեռքի նմանեցնելու պատճառով, ուստի ունենք նաև բառի նախնական նշանակությանն ավելի մոտ *չանչ*՝ «գրող, մճիկ», *չանչ անել* «գրող չափել» *չանչել* «ձեռքի մատները լայն բացած գրող չափել, մճիկ հանել», *չանչուլ* «կատվի թաթ, թաթուլ, թանթուլ»:⁵²

Չանչ բառի «ձեռք» > «խաղողի չանչ» իմաստային զարգացման համար հմմտ. *թեւք խաղողոյ* «խաղողի որթի կոտրակ», այսինքն՝ «խաղողի վագի ստորին չոր և հաստ մասը»⁵³ և *թեւ* «մարդու բազուկ, ձեռք՝ ուսից մինչև դաստակը (մատների ծայրը)»,⁵⁴ նաև *մատ* «խաղողի որթի ճյուղերը» և *մատն* «ձեռքի և ոտքի մատ»:⁵⁵ Առավել ուշագրավ է *կուտ* բառը, որն ինչպես վերևում տեսանք նշանակում է «խաղողի որթի գլխավոր ճյուղերը, որոնց վրա գտնվում են մի քանի շիվեր»,⁵⁶ բայց

⁴⁵ ՀՄԲ, հ. IV, էջ 56:

⁴⁶ ՀՄԲ, հ. IV, էջ 55:

⁴⁷ ՀՄԲ, հ. IV, էջ 29, ՀԲԲ, հ. IV, էջ 54:

⁴⁸ ՀԲԲ, հ. IV, էջ 54, ՀՄԲ, հ. IV, էջ 29-30:

⁴⁹ *ABNIN*, N 27.

⁵⁰ ՀԲԲ, հ. IV, էջ 10, ՀՄԲ, հ. III, էջ 623-624:

⁵¹ ՀԲԲ, հ. IV, էջ 10, ՀՄԲ, հ. III էջ 623-624

⁵² ՀԲԲ, հ. IV, էջ 10:

⁵³ ՀԲԲ, հ. II, էջ 100, 475, ՀՄԲ, հ. II, էջ 177:

⁵⁴ *Նույն տեղում*, էջ 99:

⁵⁵ ՀՄԲ, հ. III, էջ 270:

⁵⁶ ՀՄԲ, հ. II, էջ 638:

որը նույնն է *կուլ* «բազուկ, թև, ձեռք, ուսից մինչև մատների ծայրը»⁵⁷ բառի հետ: Իսկ Է. Աղայանը ցույց է տվել, որ վերջինս ծագում է հ.-ե. *gōr- «դարձնել», «գալաբել, ոլորել» արմատից,⁵⁸ այսինքն՝ այն նույն արմատից, որից են նաև խաղողագործությանն ու գինեգործությանը վերաբերող *կուլ* արմատով բառերը և Quria երկրանունը:

Ուրարտական Արամալի/Արմարիլի նահանգի բնակավայրերից «խաղողային» բնույթի անուն էր կրում *Տինուակ*-ը (<*Տինու-ակ),⁵⁹ որի անվան երկրորդ բաղադրիչը առկա է նաև նույն Վանա լճի ավազանի *Արդուակ* (<*Արդու-ակ),⁶⁰ Ուրմիա լճի ավազանի *Բարուակա* (<*Բար-ուակ)⁶¹ տեղանունների, հայ. *բարունակ* (<*բար-ունակ) «երկայնատարած ուռն որթոյ»⁶² բառի մեջ: *Տինուակ*-ի *Տին*- բաղադրիչը հայ. *ծին* (<հ.-ե.*gén) բառն է՝ արմատակիցը *ծան* «ճանաչել» (նաև «հայտնի», իսկ ազգակից լեզուներում՝ «ծանոթ, սովոր»)՝⁶³ բառի՝ առկա նաև *ծնեբեկ*, *ծնիկ*, *ծնծատ*, *ծնծեղ*, *ծնծղար* բուսանուններում:⁶⁴ Ըստ երևույթին, **ծինի-ունակ* կոչվել է մշակովի՝ սովորական, ծանոթ խաղողը՝ ի տարբերություն վայրի խաղողի: Վերջինը կարող էր կոչվել **արդի-ունակ*, որում *արդի* բաղադրիչը հավանաբար «ժայռ» է նշանակում և արմատակիցն է հին հնդկ. adri- «սար, ժայռ» և իլյուր. adri «ժայռ, խութ» բառերի:⁶⁵ Հայերենի օրինաչափությամբ հ.-ե. *dr->րդ->արա-, ուստի այս բառերի արմատակիցն է լինելու Վանա լճի *Արուի* կղզու՝⁶⁶ անունը՝ «ծովածայռ, խութ» իմաստներով: Սեպագիր *Bar-unaka տեղանվան և հայերեն **բար-ունակ* բառի առաջին բաղադրիչները ծագում են հ.-ե. *bher- արմատի ստորին *bhr- ձայնադարձից: Այս արմատի վերին ձայնադարձից ունենք *բեր/բերք* «բերք, հողի բերած արդյունքը, պտուղ» բառը, որի ազգակիցներն են. հուն. φέρμα «պտուղ», φορά «պտղաբերություն, բերք», պարս. bar «բերք, պտուղ, արդյունք» և այլն:⁶⁷

*Ardi-unak, *Տինուակ*, *Bar-unaka սեպագիր տեղանունների և **բար-ունակ* բառի երկրորդ բաղադրիչները արտացոլում են հ.-ե. *uein-ag «խաղող, խաղողուտ» բառի կարճ տարբերակը: Այս նույն նախաձևի երկար տարբերակն է առկա *գինակ* (հ.-ե. *u-> հայ. գ-) «խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղևով, մեծ կլոր հատիկներով» բառում: Մրանց հետ միասին հ.-ե. *uein-ag նախաձևից է ծագում նաև հին պլավ. vinjaga «խաղողի վազ» բառը, սիկ նախաձևին մերձավոր ձև է համարվում վրաց. venag «խաղողուտ» բառը:⁶⁸ Վերջինս փոխառյալ է լինելու հայերեն *գինակ*-ի հնագույն ձևից (երբ դեռևս տեղի չէր ունեցել հ.-ե. *u->հայ. գ

⁵⁷ ՀԲԲ, հ. II, էջ 484:

⁵⁸ Աղայան Է., նշվ. աշխ., էջ 102-103, 107-108:

⁵⁹ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 235.

⁶⁰ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 34.

⁶¹ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 54.

⁶² «Նոր բարգիռք հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 467:

⁶³ ՀԱԲ, հ. II էջ 443, 457:

⁶⁴ ՀԲԲ, հ. II էջ 345, 346, ՀԱԲ, հ. II, էջ 464, 465:

⁶⁵ Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13 և ծան. 8:

⁶⁶ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 41, 45, 108:

⁶⁷ ՀԱԲ, հ. I, էջ 440-441:

⁶⁸ ИЯИ, т. II, стр. 649, пр. 2, стр. 881, пр. 1.

հնչյունափոխությունը) այնպես, ինչպես հայերենից են փոխառյալ «զինի» նշանակող բառերից այս դեպքում հատկապես հիշատակելի վրաց. *ղվինի, ղվինո*, մեգր. *ղվինի*, լազ. *ղունի, ղինի* բառերը:⁶⁹

Մեր նախնիների խաղողագործության և գինեգործության հովանավոր աստվածություններից ոմանք լինելու էին նաև երկնային մատովակներ: Այդպիսին էր լինելու հայասական Սnagašta-ճ կոչված 2 աստվածություններից⁷⁰ մեկը (մյուսը կարող էր լինել միայն խաղողագործության հովանավոր աստվածություն): Սnagašta-ճ//Սnagasta- ղիցանվան մեջ առկա է վերոհիշյալ *<unak-//*ունակ- բառի ավելի հին *unag- ձևը (հ.-ե. * g-> հայ. *կ*) և -asta-// -աստ վերջածանցը (հմմտ. *ասագ-աստ, գգ-աստ, իմ-աստ, հաւ-աստ-ի-ք*):⁷¹

Հին Հայաստանում պալատական մատովակի և հագարապետի՝ երկրի գլխավոր տնտեսի, պաշտոնների միասնությունը դարավոր արմատներ ուներ: Քսենոփոնի վկայությամբ, երբ Հայաստանի փոխսատրապ (հյուպարքոս) Տիրիբագոսը դիմել էր փախուստի, նրան հանկարծակիի բերած հույն վարձկանների կողմից «գրավվեց Տիրիբագոսի վրանը և նրա մեջ արծաթյա ոտքերով մահիճներ և ըմպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ»:⁷² Հացի և գինու փոխադարձ կապը իր դրսևորումներն էր գտել ոչ միայն հայի առօրյայում, այլև իր հոգևոր կյանքի բազմաթիվ ոլորտներում: Հողվածում քննարկվող հայցերի տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի ինչպես «Հա՛ցն ու զինի՛ն, Տե՛ր Կենդանին» աղոթքի, երդման և ոգեկոչման հանրահայտ բանաձևը, այնպես էլ այն հանգամանքը, որ մեր եկեղեցու ծիսակարգում մեկ ընդհանուր՝ *Սպասս* անունով է կոչվում պատարագի ժամանակ օրհնվող հացն ու զինին:⁷³ Հայոց Արամայիս նահապետի 2 որդիների վերաբերյալ ավանդազրույցի պատատիկները ևս վկայում են հացի և գինու միասնական պաշտամունքի հնամենի ակունքների մասին: Արարատյան դաշտում հաստատված Արամանյակի սերունդների թվարկումը թե՛ Մովսես Խորենացու, թե՛ Անանուս պատմիչի (Մեբեոս) երկում սկսվում է նրա որդի Արամայիսով, ով Արմավիրը հիմնադրելուց հետո «գորդի իւր զՇարայ՝ գյուղվածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղիւի իւրով ի դաշտ մի մօտաւոր յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ», իսկ Արամայիսի մյուս որդին՝ Ամասիան, «անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ... զլեառնն Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս. Եւ ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկած ամս սակաւս, եւ մեռաւ»:⁷⁴ Շարայի առնչությունը հացառատ Շիրակին, իր անվան «հացահատիկային» ստուգաբանությամբ հանդերձ, վկայում է նրա

⁶⁹ ՀՄԲ, հ. I, էջ 558-559:

⁷⁰ *Хачатурян В. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики)*, Ер., 1971, стр. 148 ("Keilschrifturkunden aus Boghazköi", Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV, 31-33).

⁷¹ ՀՄԲ, հ. IV էջ 672:

⁷² *Քսենոփոն*, *Անարասիս*, Եր., 1970, էջ 94 (թարգմ. Ս. Կրկյաշարյան, *Xen. Anabasis*, IV, 21):

⁷³ ՀՄԲ, հ. IV, էջ 254:

⁷⁴ *Խորենացի*, *Ս. ժր (հմմտ. Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն)*, Եր., 1939, գլ. Ս, էջ 5):

նախատիպի հացահատիկի անձնավորում աստվածություն (ոգի) լինելու մասին,⁷⁵ իսկ Ամասիան՝ որպես Մասիա/Արարատ լեռան անվանադիր, առնչություն ունի խաղողագործության հետ, որովհետև այս լեռն է խաղողագործության և գինեգործության առաջին օջախը համարվում թե՛ հայկական, թե՛ աստվածաշնչային ավանդությունների համաձայն:⁷⁶

Եթե Quria կոչված երկրներից Արագածոտնինը առնչվում է Արամայնակին և կրկնորդ կերպար Արամայիսին՝ Արգածոտնը նրանց տիրույթն էր, ապա Ադիովտինը գտնվում էր Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (մ.թ.ա.859-824թթ.) կողմից Aramale անվամբ հիշատակված ուրարտական նահանգում:⁷⁷ Ասորեստանի մեկ ուրիշ թագավոր՝ Սարգոն II-ը (մ.թ.ա. 722-705թթ.), նույն այս նահանգը կոչում է Armarili և Armariali:⁷⁸ Այս անունների Aram- և Arm- սկզբնամասերը այնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին առկա է նաև *Արամանեակ/Արամայիս* և *Արմաիք* առնչության դեպքում: Մեպագրային Aramali<*Aram-ali (հմմտ. *դարան-ադի*, *Ման(ան)ադի*, *Մարդ-ադի* հին հայկական գավառանունները) տեղանվան հիմք *Aram-ը նույնական է ինչպես Ուրարտական թագավորության հիմնադիր Arame/Aramu թագավորի (մ.թ.ա. IXդ. կեսեր), այնպես էլ հայոց Արամ նահապետի⁷⁹ անունների հետ:⁸⁰ *Արամանեակ* անվան նման դրանք ևս իրենց հիմքում ունեն հ.-ե. *arə-/*Har- «հերկել, վարել», արմատը⁸¹ և արգասիքն են հողագործության մեջ արորի (*արոր*< հ.-ե. *arə-tro-)⁸² ներդրման՝ հացաբույսերի մշակության բրիչային ձևից արորայինին անցնելու երևույթի և դրանք ընդգրկված դարաշրջանի: Տնտեսամշակութային այդ առաջընթացի արգասիքն էր նաև Արա Գեղեցիկի անունը (*Արայ*<*arə- և -այ վերջածանց. հմմտ. նաև Արարատյան բարբառում տղամարդկանց նկատմամբ կիրառվող *ա՛րա* կոչական բառը)⁸³: Արան՝ Արամ նահապետի որդին և անվանադիրն էր Արարատյան դաշտի (Այրարատ, դաշտն Արայի),⁸⁴ հովանավորը արորային հողագործության և ժառանգորդը մեռնող-հառնող մի աստվածության:

⁷⁵ **Պետրոսյան Ս.**, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 177-189, Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 281-285, 306:

⁷⁶ **Պետրոսյան Ս.**, Միսակ և Նոյ նահապետների մասին հայոց ավանդությունների պատմական հենքը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. VI, Գյումրի, 2003, էջ 5-16, Նույնի, Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 223-225:

⁷⁷ *ABNAY*, NN 27, 28.

⁷⁸ **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն. ակունքները. X-VIդդ. մ.թ.ա. Եր., 1972, էջ 85, ծան. 1 էջ 111:

⁷⁹ **Խորենացի, Ա.** ժբ-ժգ:

⁸⁰ **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 53-55:

⁸¹ Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 176-180, 305-306, 365-366:

⁸² ՀԱԲ, հ. I, էջ 350:

⁸³ Հմմտ. **Պետրոսյան Ս.**, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, էջ 197-198:

⁸⁴ **Խորենացի, Ա.** ժե, ժգ, Սէբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Ա, էջ 6, 7:

Հ.-ե. *arə- և *aruo- «ազատ հողագործ» արմատակից նախաձևերից սերած բառեր կան մի շարք ժառանգ լեզուներում, որոնցից են հայ. *հարաւունք* «ցանք, վարուցան, սերմ, արտ» (Մշո բարբառում ունենք *հարվունք* «գարնան և աշնան եղանակին՝ անձրևներից կակղած հող, որ կարելի է արորով վարել»⁸⁵), հուն. ἄροσρα «վարելահող», լատին. arvom «դաշտ», միջ. իռլ. arbor «հացահատիկներ», իւեթ. araya «ազատ, ապահարկ», լյուկ. arawa «(հարկից) ազատ, լիտվ. arvas «ազատ» և այլն⁸⁶ հ.-ե. aruo- «ազատ հողագործ» նախաձևն է ընկած ուրարտական Արմարիի նահանգի բնակավայրերից մեկի Arbu անվան⁸⁷ հիմքում (սեպագր. b/b, u, v, իսկ u/u, o): Մա ուրարտական արքայատոհմի բնակավայրերից էր, որովհետև Մարգոն II-ն այն կոչում է «Ուրսայի հայրական տուն», իսկ հարևան Ռիյար բնակավայրը՝ «Իշտարդուրիի քաղաք»՝ ի նկատի առնելով Ռուսա I-ին (Ուրսա) և Մարդուրի II-ին (Իշտարդուրի):⁸⁸

Arbu-ի գուգակից Rijar-ի անունը ևս հնդեվրոպական ծագումով հողագործական բնույթ ունեցող տեղանուն է: Այս անունը պահած *Շրեր* գյուղը (Շրեր<*Շրի-ար) «թաղված էր այգիների և ծառաստանների մեջ: XIX դարի կեսերին ուներ 82 տուն, վերջերին՝ 100, իսկ 1915թ. նախօրյակին՝ 110 տուն հայ բնակիչ. զբաղվում էին *երկրագործությամբ*, անասնապահությամբ, *պտղաբուծությամբ*, *խաղողագործությամբ* և արհեստներով»: ⁸⁹ Rijar<*Rii-ar տեղանվան առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *reHi- «ունեցվածք» արմատից, որից են նաև հին հնդկ. rayi «բարիք, ունեցվածք, հարստություն», ավեստ. raevant «հարուստ», լատին. res (սեռ. հոլով. rei) «ունեցվածք, իրեր» բառերը: ⁹⁰ Rii-ar տեղանվան երկրորդ բաղադրիչի համար հմմտ. -ար վերջածանցը *արդ-ար*, *կերպ-ար*, *մոլ-ար*, *պալ-ար* և այլ բառերում:

Հնագույն Ադիոպտի և Արագածոտնի Quria անունները և դրանց իմաստակից մյուս տեղանունները վկայություններն են Հայկական լեռնաշխարհի առանձին շրջանների տնտեսության մեջ խաղողագործության և գինեգործության առաջատար ճյուղեր լինելու, երբ դրանց հարևան և այլ շրջաններից շատերում այդպիսի դեր վերապահված էր հացազգի բույսերի մշակությանը: «Խաղողա-գինիական» ստուգաբանությամբ բերված և այլ տեղանունների առաջացման ժամանակաշրջանը, անտարակույս, նախորդել է դրանց սեպագրային գրանցում ստանալու դարաշրջանի և, մեր կարծիքով, գուգադիպել է արորային հողագործության արգասիք քննարկված տեղանունների մյուս խմբի առաջացման դարաշրջանին: Պատմական այդ գործընթացը պայմանավորված է եղել միննույն էթնիկական ընդհանրությանը պատկանող Հայկական լեռնաշխարհի բնակչության տարբեր հատվածների ըստ տնտեսամշակութային հատկանիշների առանձնացման և

⁸⁵ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 57:

⁸⁶ ИЯИ, т. II, стр 477, 885.

⁸⁷ АВИИУ, надп. NN 46, 49.

⁸⁸ Արոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., էջ 193-194:

⁸⁹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., նշվ. աշխ., հ. II, Եր., 1988, էջ 364:

⁹⁰ ИЯИ, т. II, стр. 747; Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 181-182:

դասային խմբավորման հասարակական պահանջով, իսկ դրանք նախորդել են մեր լեռնաշխարհում պետական կազմավորումների առաջացման և պետությունների ձևավորման դարաշրջանին:

СТРАНЫ QURIA И ДРЕВНЕАРМЯНСКИЕ ВИНОЧЕРПИИ

___ *Резюме* ___

___ *С. Петросян* ___

По сообщению Мовсеса Хоренаци, родовое имя нахараров Гнуни происходит от арм. гини «вино». Наследственное владение Гнуниев находилось в древнеармянской области Алиовит, а как придворные виночерпии они имели поместье на севере древнеармянской области Арагацотн. В Урартский период эти земли именовались Quria-, так же «винное» название: ср. арм. *кури* (կուրի) - в арго «вино», слово индоевропейского происхождения. Quria в Алиовите была в составе урартской провинции Арамали/Армар(ий)али, а Куриа в Арагацотне, по древнеармянским эпическим сказаниям, считаются вотчиной Арамаяка - старшего сына этнарха армян Хайка (Хоренаци, I, 12). В основе л.и. *Арамаяк* (Արամայակ) и топонимов *Agamali/Armar* (ii)a-li и.-е. *arə «пахать, вспахивать»: ср. арм. *арор* (արօր<արար<и.-е. *are-tro-) «орало, соха». И.-е. корень *arə- наличествует и в имени основателя Урартского государства царя Араме (Arame, Aramu).

Появление названий Quria должно быть обусловлено процессом дифференциации населения армянского нагорья по хозяйственно-культурным типам задолго до появления здесь государственности, но после широкого распространения пашенного земледелия. В данном случае имеется в виду факт распространения у предков армян в Алиовите и Арагацотне уже виноградарства и виноделия, а их соседи продолжали преимущественно заниматься культивированием зерновых.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Սարգիս Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊԱԻ պատմության և իրավագիտության ամբիոն,
E-mail: Vahe1996@mail.ru